

իրեն ուղիղ հաշիւ տալ չէ կարող, նորան թուում է միշտ թէ զիմացինը կամ յիմարի մէկն է ու սեփական օգուտը չի հասկանում կամ որեւէ խարդախութիւն ունի մտքում: որ արտաքին փայլով ծածկել է կամենում ուրիշներին աչքից:

Ահ, ի՞նչ կլինէր, եթէ ամենքը կարողանային ըմբռնել այն երանական զգացումը, որ գաղափարի մարդը՝ քրիստոնեային ունենում է, երբ գիտէ, թէ մի լաւ բան է արել աշխարհի աչքից ծածուկ աշխարհի համար աննշան, բայց իրօք գնահատելի զեղեցիկ բան: այնպէս որ պարզերես դէպի վեր նայել եւ Անպիտան ծառայ եմ: պարքս կատարեցի, ասել պէտք է համարձակուի: Եւ ի՞նչ կլինէր աշխարհը, եթէ նորա մէջ այդպիսի գաղափարի մարդիկ չգտնուէին՝ եթէ չգտնուէին քրիստոնեաներ, որոնք իրենց Երկնաւոր Վարդապետի նման պատրաստ լինէին իրենց անձը եղբայրների համար դնելու, ամեն բանից առաջ Երկնքի արքայութիւն խնդրելու: Երկնքի արքայութեան գործն առաջ տանելու համոզուած լինելով, որ մնացածը ինքն իրեն կգայ: Շահախնդիր անձնասէր մարդկութեան մէջ այդպիսիները անհաշտ տարրերին իրար հետ կապող օղակներ են: սառն անջրպետները լեցնող ջերմութիւն: նոցա ներկայութիւնը յաճախ զգալի չէ, բայց շատ զգալի է բացակայութիւնը: նոցա հաւատն է, նոցա անկեղծ ոգևորութիւնը, որ սարերը շարժում է, անդունդները ծածկում և գաղափարական վտեմ կեանքի հոսանքը յառաջ տանում:

Կ. Վ.



ԱՍՏՈՒԺՈՅ

ԿԱՄ

ԵՐԿՆԻՔԻ ԱՐԲԱՅՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ:

Ով աւետարանի բովանդակութեան ի մօտայ ծանօթ է՝ նկատած կլինի անշուշտ, որ քրիստոսի քարոզութեան գլխաւոր առարկան կազմում է Երկնքի արքայութեան գաղափարը և այդ գաղափարի շուրջ են պտտւում զրեթէ Երրա բոլոր խօսքերը: Արդէն Յով-

հաննէս Մկրտիչը Երրանից առաջ Երկնքի արքայութեան մօտ լինելը քարոզել էր, և երբ Եա մկրտութիւնից յետոյ իրրե քարոզիչ հրապարակ է եկում՝ կրկին առաջին խօսքն է. «Ապաշխարեցէք» զի մերձեալ է արքայութիւն Երկնից» (Մատթ. Գ. 14): ամբողջ լեւրան քարոզը այդ արքայութեան ճանապարհները ցոյց տալու համար է առւած: Զրիստոսի առականքի մեծագոյն մասը արքայութեան գաղափարը բացատրելու համար է: Արդ, ի՞նչ էր կամենում հասկացնել Եա Երկնքի արքայութիւն ասելով, այդ հիմնական գաղափարի բացատրութիւնից կախուած է ամբողջ աւետարանի ուղիղ ըմբռնումը:

Եախ և առաջ պարզ է, որ քրիստոս Աստուծոյ արքայութեան մասին խօսում է իրրե մի ծանօթ գաղափարի մասին: երբ Եա ասում էր՝ Աստուծոյ արքայութիւնը մօտեցել է, ունկնդիրներն անշուշտ մի բան հասկանում էին: Յիրաւի, եթէ չին Կտախարանը ձեռք առնենք՝ կտեմնենք, որ այդ գաղափարն անծանօթ չէ այնտեղ: Երբ պատերազմի դաշտից յաղթութեամբ վերադարձած Գեդէոնին ժողովուրդն առաջարկում էր թագաւորել իւր վերայ՝ Եա մերժեց առարկելով թէ Աստուած է Խորայէլի թագաւորը, և երբ ժողովուրդը Սամուէլից թագաւոր էր պահանջում՝ սորան ևս ամբարշտութիւն է թուում այդ միտքը: մովսիսական օրէնքը ծայրէ ի ծայր այն հայեացքն է պաշտպանում թէ Խորայէլի ժողովուրդը Աստուծոյ սեփականութիւնն է: Երրան միայն իրրե բացարձակ տէր և իշխան պէտք է նկատէ, Եորա պատուէրներով առաջնորդուի թէ պատերազմի և թէ խաղաղութեան միջոցին: կազմէ ուրեմն մի թագաւորութիւն, որի մէջ Աստուծոյ կամքն է բացարձակ իշխում: Արդարեւ եղան Խորայէլի երկրաւոր թագաւորներ ևս, բայց նոքա համարում էին միայն Երկնաւորի ներկայացուցիչ: Եորա իշխանութիւնը գործադրողներ, իրրե Տիրոջ օժեանքներ նոքա ընդունում էին Տիրոջ կողմից արդարութեան և իմաստութեան հոգի, արդարութեամբ և իմաստութեամբ իշխանութիւն վարելու, սակայն երբէք չպէտք է կորցնէին այն գիտակցութիւնը, թէ այդ իշխանութիւնը իրենց չէ

դատականում, այլ Նրկնաւոր թագաւորին: Եւ երբ այդ թագաւորները իրենց անօրէն գործերով և իրենց թուլութեամբ ապացուցեցին, որ անընդունակ են Աստուծոյ արժանի ներկայացուցիչներ լինելու: որ նոցա թագաւորութիւնն իսկական Աստուծոյ թագաւորութիւն՝ այսինքն այնպիսին, ուր Աստուծոյ կամքն է բացարձակ իշխում: լինել չէ կարող՝ հանդէս եկան մարգարէները և քարոզեցին թէ Աստուծոյ արքայութիւնը ապագայում պէտք է սպասել՝ ապագայում պէտք է յայտնուի Տիրոջ այն ճշմարիտ Օծեալը, որ Նորա իսկական թագաւորութիւնը պէտք է հաստատէ: Այսպէս: Դանիէլ նկարագրելով աշխարհի վերայ եղած չորս մեծ թագաւորութիւնները իբրեւ չորս այլ և այլ զազաններ՝ տեսնում է վերջին անգամ. «Եւ ահա ընդ ամպս երկնից իբրեւ որդի մարդոյ գայր՝ և հասանէր մինչև ի Հինաւուրցն և մատուցաւ առաջի Նորա և տուաւ նմա իշխանութիւն և պատիւ և արքայութիւն՝ և ամենայն ազգք և ազինք և լեզուք նմա ծառայեցեն և իշխանութիւն նորա իշխանութիւն յաւիտեական որ ոչ անցանէ և թագաւորութիւն Նորա ոչ եղծանիցի» (Դան. Է. 13, 14): Ահա այդ երկնքից եկող անեղծանելի թագաւորութիւնն էր, որին սպասում էին քրիստոսի ժամանակակիցները և որ նա ինքն՝ Մարգոյ Որդին, բերել էր:

Բոլոր հրէաները հարկաւ նոյն հասկացողութիւնը չունէին Աստուծոյ արքայութեան մասին՝ մէկն աւելի այս բարիքն էր սպասում նորանից, միւսն այն բարիքը, բայց բոլորը համոզուած էին, որ ամեն բարիք և ցանկալի բան այդ արքայութիւնը պէտք է բերէ իրենց համար, որ նա ամենից առաջ իրենց՝ հրէաների թագաւորութիւն պէտք է լինի, այսինքն որ բոլոր հեթանոս իշխանութիւնները պէտք է կործանուին և ամէնքը գան նոցա՝ Աստուծոյ ժողովուրդի հպատակը դառնան: Երբ ուրեմն Փրկիչը նոցա քարոզում էր թէ Աստուծոյ արքայութիւնը մօտեցել է՝ նոքա ուրիշ բան հասկանալ չէին կարող, բայց եթէ՝ մեսիական թագաւորութեան մասին է խօսքը և այդպէս էլ հասկանում էին, երբ Տիրոջ հանդիսաւոր կերպով Երուսաղէմ մտնե-

լիս բացականչում էին. «Օրհնեալ թագաւորութիւնդ եկեալ հօր մերոյ Դաւթի» (Մկ. ԺԱ. 10): Նոքա զիտէին, թէ ինչ թագաւորութիւն են օրհնում, բայց ուրիշ բան էին սպասում այդ թագաւորութիւնից՝ քան սպասել պէտք էր քան Աստուծոյ և Դաւթի Որդին տալ կարող էր, ուստի և Նա բազմութիւ առականերով ու բացատրութիւններով որոշում է իւր բերած արքայութեան իսկական բնաւորութիւնն ու նպատակը:

Յայտնի է, որ աւետարանիչներից Մատթէոս սովորաբար «Արքայութիւն Երկնից» է ասում իսկ միւսները միայն «Արքայութիւն Աստուծոյ»: Այդ տարբերութիւնը բացատրուում է հաւանականաբար նորանով, որ ինքը Փրկիչը մեծ մասամբ առաջին դարձուածն էր գործածում իսկ աւետարանիչները նախապատուութիւն են տուել երկրորդին, որովհետեւ «Արքայութիւն Երկնից» խօսքերը հրէաներին էին հասկանալի և կարող էին թիւրիմացութիւն պատճառել հեթանոսութիւնից դարձած քրիստոնեաների մէջ, որոնց համար գրում էին նոքա իրենց աւետարանները: Երկնքի Արքայութիւն ասելով քրիստոս ի նկատի ունէր հաւանականաբար՝ նախ Դանիէլի մարգարէութեան յիշեալ հատուածը և ապա կամենում էր ասել, որ իւր բերած թագաւորութիւնը երկրաւոր թագաւորութիւն չէ, միւս երկրաւոր թագաւորութիւնների տեղը բռնող՝ ինչպէս Դանիէլի խօսքերից սրբալմամբ եզրակացնել կարելի էր, այլ երկրաւոր թէ՛ ծագմամբ և թէ՛ ներքին բովանդակութեամբ: Վերջինս ամենից աւելի պարզ երևում է տէրունական աղօթքի մէջ. ուր «Եկեաց և արքայութիւն քո՝ խօսքերից յետոյ անմիջապէս աւելացրած է. «Եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի»: Աստուծոյ իսկական թագաւորութիւնն ուրեմն երկնքումն է՝ այնտեղ, ուր Նորա կամքը բացարձակապէս կատարուում է. իսկ ինչդրել, որ այդ արքայութիւնը մեզ մօտ կայ՝ նշանակում է ցանկանալ, որ Նորա կամքն այստեղ ևս բացարձակապէս կատարուի, որ Աստուծոյ արքայութիւնն առանց իւր երկնաշին բնաւորութիւնը կորցնելու, իւր մէջ առնէ նաև երկրաւոր ծագումն ունեցող մար-

գիկներին: Այստեղից հետևում է ուրեմն, որ Աստուծոյ կամ Երկնքի Արքայութիւնն ընդհանուր մտքով առած նշանակում է՝ իրերի այն կարգը, ուր Աստուած կատարելապէս իշխում է: ուր ամեն ինչ Նորա կամքի համաձայն է կատարուում: Եթէ աւետարանների մէջ շատ տեղերում արքայութիւնը ներկայացրած է իբրեւ մի բարիք, իբրեւ մի դանձ, որ պէտք է աշխատենք ձեռք բերել՝ այդ նորա համար է, որ նոյն իսկ Աստուծոյ հովանաւորութեան ներքոյ գտնուելը, Նորա կամքի համաձայն շարժելու վիճակի մէջ լինելը՝ իբրեւ բարձրագոյն բարիք է նկատուում:

Ինչպէս յայտնի է, առաջին երանութեամբ, որով սկսուում է լերան քարոզը՝ Զրիստոս Երկնքի արքայութիւն է խոստանում հոգեով աղքատներին (Մթ. Ծ. 3). նշանակում է ուրեմն, որ այդ արքայութիւնը արդէն պատրաստ կայ, այժմանից նորա մէջ մտնել կարելի է, եթէ միայն ունի մէկը համապատասխան ներքին արժանիքը: Նոյնը հաստատում են նաեւ Մթ. ԺԱ. 12. «Բայց յաւուրցն Յովհաննու Մկրտչի մինչև յայժմ արքայութիւն Երկնից բռնադատի, և բռնուք յափշտակեն զնա»: Մթ. ԺԲ. 28. «Ապա եթէ Հոգեով Աստուծոյ հանեմ ես զգէս, ուրեմն հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ», և այլ նման խօսքեր, և եթէ Ղուկ. ԺԷ. 20. փարիսեցիների հարցին Զրիստոս պատասխանում է. «Ոչ զայ արքայութիւն Աստուծոյ խորանօք, և չասիցեն թէ ահաւասիկ աստ է կամ անդ, զի ահա արքայութիւն Աստուծոյ ի ներքս ի ձեզ է», պէտք է ընդունել, որ Նա Աստուծոյ արքայութիւնը այդպիսով յանձին իւր նոցա մէջ յայտնուած է ներկայացնում. որովհետեւ փարիսեցիներին չէր կարող Նա ասել՝ ձեր ներսը, այսինքն ձեր սրտում արքայութիւն կայ, ինչպէս շատ անգամ հասկանում են: Եւսմենայն դէպս Աստուծոյ արքայութիւնը ներկայանում է ուրեմն իբրեւ մի վիճակ, որի մէջ արդէն ներկայ կեանքում լինել կարելի է. իսկ թէ իմն յիրաւի բայի Զրիստոսից ուրիշ այնպիսիները, որոնք մասնակից են այդ վիճակին՝ երևում է օր. Մթ. ԺԱ. 11. «Բայց փոքրիկն

արքայութեան Երկնից մեծ է քան զնա (զԵս. 40. 5. 1. 2. 3. 4. 5. 6. 7. 8. 9. 10. 11. 12. 13. 14. 15. 16. 17. 18. 19. 20. 21. 22. 23. 24. 25. 26. 27. 28. 29. 30. 31. 32. 33. 34. 35. 36. 37. 38. 39. 40. 41. 42. 43. 44. 45. 46. 47. 48. 49. 50. 51. 52. 53. 54. 55. 56. 57. 58. 59. 60. 61. 62. 63. 64. 65. 66. 67. 68. 69. 70. 71. 72. 73. 74. 75. 76. 77. 78. 79. 80. 81. 82. 83. 84. 85. 86. 87. 88. 89. 90. 91. 92. 93. 94. 95. 96. 97. 98. 99. 100. 101. 102. 103. 104. 105. 106. 107. 108. 109. 110. 111. 112. 113. 114. 115. 116. 117. 118. 119. 120. 121. 122. 123. 124. 125. 126. 127. 128. 129. 130. 131. 132. 133. 134. 135. 136. 137. 138. 139. 140. 141. 142. 143. 144. 145. 146. 147. 148. 149. 150. 151. 152. 153. 154. 155. 156. 157. 158. 159. 160. 161. 162. 163. 164. 165. 166. 167. 168. 169. 170. 171. 172. 173. 174. 175. 176. 177. 178. 179. 180. 181. 182. 183. 184. 185. 186. 187. 188. 189. 190. 191. 192. 193. 194. 195. 196. 197. 198. 199. 200. 201. 202. 203. 204. 205. 206. 207. 208. 209. 210. 211. 212. 213. 214. 215. 216. 217. 218. 219. 220. 221. 222. 223. 224. 225. 226. 227. 228. 229. 230. 231. 232. 233. 234. 235. 236. 237. 238. 239. 240. 241. 242. 243. 244. 245. 246. 247. 248. 249. 250. 251. 252. 253. 254. 255. 256. 257. 258. 259. 260. 261. 262. 263. 264. 265. 266. 267. 268. 269. 270. 271. 272. 273. 274. 275. 276. 277. 278. 279. 280. 281. 282. 283. 284. 285. 286. 287. 288. 289. 290. 291. 292. 293. 294. 295. 296. 297. 298. 299. 300. 301. 302. 303. 304. 305. 306. 307. 308. 309. 310. 311. 312. 313. 314. 315. 316. 317. 318. 319. 320. 321. 322. 323. 324. 325. 326. 327. 328. 329. 330. 331. 332. 333. 334. 335. 336. 337. 338. 339. 340. 341. 342. 343. 344. 345. 346. 347. 348. 349. 350. 351. 352. 353. 354. 355. 356. 357. 358. 359. 360. 361. 362. 363. 364. 365. 366. 367. 368. 369. 370. 371. 372. 373. 374. 375. 376. 377. 378. 379. 380. 381. 382. 383. 384. 385. 386. 387. 388. 389. 390. 391. 392. 393. 394. 395. 396. 397. 398. 399. 400. 401. 402. 403. 404. 405. 406. 407. 408. 409. 410. 411. 412. 413. 414. 415. 416. 417. 418. 419. 420. 421. 422. 423. 424. 425. 426. 427. 428. 429. 430. 431. 432. 433. 434. 435. 436. 437. 438. 439. 440. 441. 442. 443. 444. 445. 446. 447. 448. 449. 450. 451. 452. 453. 454. 455. 456. 457. 458. 459. 460. 461. 462. 463. 464. 465. 466. 467. 468. 469. 470. 471. 472. 473. 474. 475. 476. 477. 478. 479. 480. 481. 482. 483. 484. 485. 486. 487. 488. 489. 490. 491. 492. 493. 494. 495. 496. 497. 498. 499. 500. 501. 502. 503. 504. 505. 506. 507. 508. 509. 510. 511. 512. 513. 514. 515. 516. 517. 518. 519. 520. 521. 522. 523. 524. 525. 526. 527. 528. 529. 530. 531. 532. 533. 534. 535. 536. 537. 538. 539. 540. 541. 542. 543. 544. 545. 546. 547. 548. 549. 550. 551. 552. 553. 554. 555. 556. 557. 558. 559. 560. 561. 562. 563. 564. 565. 566. 567. 568. 569. 570. 571. 572. 573. 574. 575. 576. 577. 578. 579. 580. 581. 582. 583. 584. 585. 586. 587. 588. 589. 590. 591. 592. 593. 594. 595. 596. 597. 598. 599. 600. 601. 602. 603. 604. 605. 606. 607. 608. 609. 610. 611. 612. 613. 614. 615. 616. 617. 618. 619. 620. 621. 622. 623. 624. 625. 626. 627. 628. 629. 630. 631. 632. 633. 634. 635. 636. 637. 638. 639. 640. 641. 642. 643. 644. 645. 646. 647. 648. 649. 650. 651. 652. 653. 654. 655. 656. 657. 658. 659. 660. 661. 662. 663. 664. 665. 666. 667. 668. 669. 670. 671. 672. 673. 674. 675. 676. 677. 678. 679. 680. 681. 682. 683. 684. 685. 686. 687. 688. 689. 690. 691. 692. 693. 694. 695. 696. 697. 698. 699. 700. 701. 702. 703. 704. 705. 706. 707. 708. 709. 710. 711. 712. 713. 714. 715. 716. 717. 718. 719. 720. 721. 722. 723. 724. 725. 726. 727. 728. 729. 730. 731. 732. 733. 734. 735. 736. 737. 738. 739. 740. 741. 742. 743. 744. 745. 746. 747. 748. 749. 750. 751. 752. 753. 754. 755. 756. 757. 758. 759. 760. 761. 762. 763. 764. 765. 766. 767. 768. 769. 770. 771. 772. 773. 774. 775. 776. 777. 778. 779. 780. 781. 782. 783. 784. 785. 786. 787. 788. 789. 790. 791. 792. 793. 794. 795. 796. 797. 798. 799. 800. 801. 802. 803. 804. 805. 806. 807. 808. 809. 810. 811. 812. 813. 814. 815. 816. 817. 818. 819. 820. 821. 822. 823. 824. 825. 826. 827. 828. 829. 830. 831. 832. 833. 834. 835. 836. 837. 838. 839. 840. 841. 842. 843. 844. 845. 846. 847. 848. 849. 850. 851. 852. 853. 854. 855. 856. 857. 858. 859. 860. 861. 862. 863. 864. 865. 866. 867. 868. 869. 870. 871. 872. 873. 874. 875. 876. 877. 878. 879. 880. 881. 882. 883. 884. 885. 886. 887. 888. 889. 890. 891. 892. 893. 894. 895. 896. 897. 898. 899. 900. 901. 902. 903. 904. 905. 906. 907. 908. 909. 910. 911. 912. 913. 914. 915. 916. 917. 918. 919. 920. 921. 922. 923. 924. 925. 926. 927. 928. 929. 930. 931. 932. 933. 934. 935. 936. 937. 938. 939. 940. 941. 942. 943. 944. 945. 946. 947. 948. 949. 950. 951. 952. 953. 954. 955. 956. 957. 958. 959. 960. 961. 962. 963. 964. 965. 966. 967. 968. 969. 970. 971. 972. 973. 974. 975. 976. 977. 978. 979. 980. 981. 982. 983. 984. 985. 986. 987. 988. 989. 990. 991. 992. 993. 994. 995. 996. 997. 998. 999. 1000.

Սակայն աւետարանի մէջ պակաս չեն նաեւ այնպիսի խօսքեր, որոնք Աստուծոյ արքայութիւնը իբրեւ ապագայում սպասուող մի բարիք կամ վիճակ են ներկայացնում: Այդպէս՝ տէրունական աղօթքով Փրկիչը սովորեցնում է խորհրդի, որ զայ Աստուծոյ արքայութիւնը, Մթ. Զ. 33. պատուիրում է հետամուտ լինել ձեռք բերելու, Մթ. Ծ. 20. «Եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր առաւել քան զդպրացն և զփարիսեցուց, ոչ մտանիցէք յարքայութիւն Երկնից», ասում է այնպիսիներին, որոնք արդէն իւր աշակերտներն են, և ինչ: Այս հակադրութիւնը բացատրուում է նորանով, որ Աստուծոյ արքայութեան սկիզբն այժմ է դրուում՝ ժառանգութեան իրաւունքը ներկայ կեանքում է ձեռք բերուում, բայց կատարեալ յայտնութիւնը և ժառանգութիւնը տեղի է ունենում ապագայում՝ հանգերձեալ կեանքում: Այսպէս, Մկ. Ժ. 15. «Որ ոչ ընկալցի զարքայութիւն Աստուծոյ իբրեւ զմանուկ, ոչ մտցէ ի նա», մի և նոյն խօսքի մէջ արքայութիւնը թէ իբրեւ ներկայ և թէ իբրեւ ապագայ է ցոյց տուած. իսկ թէ այս խորհուրդները (Մկ. Դ. 11)՝ Աստուծոյ արքայութեան ստիճանաբար զարգացումը և կատարեալ յայտնութիւնը, ինչպէս պէտք է ըմբռնել՝ ցոյց են տալիս մի շարք առակներ:

Սերմանացանի առակը ցոյց է տալիս, թէ ինչպէս Աստուծոյ արքայութեան սերմերը ցանուում են այս աշխարհի մէջ՝ խօսքով (Մկ. Դ. 14), և հարկաւոր է ժամանակ անցնի, մինչև որ նոքա աճեն և պտուղ բերեն: Որոմանց առակով պարզուում է, որ Աստուծոյ արքայութիւնը աշխարհիս վերայ զուտ, անխառն կերպով ներկայանալ չի կարող, որ ներկայ կեանքում չի կարելի մի այնպիսի համայնք կազմել, ուր բոլոր անդամները արքայութեան որդիներ լինին՝ այլ որ այստեղ արքայութեան սերմերը օտար սերմերի հետ խառն պէտք է աճեն, և ընտրութիւն անել նոցա մէջ միայն Նա իրաւունք ունի, ում տրուած է դատաւոր լինել վերջին դատաստանի օրը: Մանաննիսի և յամրի առակներ

մէջ Աստուծոյ արքայութիւնը յայտնուում է իբրեւ մի կենսական զօրութիւն, որի սկիզբը թագուն է և աննշան, բայց որ շատ ընդարձակ՝ անսահման չափով աճել կարող է և իւր մէջ առնել այն բոլոր տարրերը, որոնք Շորա ազդեցութեան ներքոյ ընկնում են։ — Այսպէս ուրեմն, քրիստոս սովորեցնում է Աստուծոյ արքայութեան վերայ իբրեւ մի դիւթական երեւոյթի վերայ չնայել, որ պէտք է յանկարծակի մի անգամից իւր բոլոր նշաններով ու զօրութեամբ տեղի ունենայ՝ այլ իբրեւ մի բարոյական ոյժի վերայ, որ իւր զարգացման, իւր կատարեալ արտայայտութեան համար ժամանակ է պահանջում։ Ինչպէս որ մանանեխի հատիկը պարունակում է արդէն ամբողջ բոյսը սաղմնական վիճակի մէջ, այսպէս էլ իւրաքանչիւր քրիստոնեայ, որ մանանեխի հատի չափ հաւատ ունի՝ Աստուծոյ արքայութեան բոլոր տարրերը կրում է արդէն իւր սրտում և մանակից է ուրեմն այժմեանից այն բարիքներին, որ նորանից սպասուում է, բայց կատարեալ կերպով արքայութեան մէջ լինել կարող է նա միայն այն ժամանակ, երբ այլ ևս մարմնական ցանկութիւններ և հոգսեր ոյժ չունին նորա վերայ, այլ աստուածային սիրով բեղմնաւորուած հոգին է նորա ամբողջ էութիւնը կազմում։

Կ. Վ.



ԹՈՒՂԹ ԿՈՒՆՏԱՆԱՅ ԶԱՅՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ի ՊԱՐՍՍ.

Ըրբհամ՝ Ա-ի յաջորդ կոմիտաս կաթողիկոսը, որ Սեբեդոսի ընծայած հաշուով* 611 կամ 612 թ.-ին կաթ. աթոռ քարձրացած պէտք է լինի՝ մեր եկ. գրականութեան մէջ յայտնի է անել իւր Անճինք նուիրեալք, գեղեցիկ շարականով, եւ մեր եկ. պատմութեան մէջ ս. Հովհիսիմէի հրաշակերտ տաճարի կառուցմամբ։ Թէեւ Հայր Զարեանաւան

* Ըրբհամ՝ կաթողիկոսին նա Խոսրով Բ.-ի թագաւորութեան ԻԱ տարին վախճանուած է ցոյց տալիս։

յիշում է (Հայկական հին դպրութիւն. Բ. տպ. եր. 405), թէ Ռուպելեան եւ Կաղանկատուացին ուրիշ այլեայլ ճառեր եւ գրութիւնք կընծային կոմիտասայ, եւ թէ Այս թղթերէն մէկ քանին Կաղանկատուացոյն գրոցը մէջ կը տեսնուին.՝ քայց մենք Ռուպելեանի պատմութեան մէջ յիշատակած ենք զսնում այն միայն, որ կոմիտաս իւր եղբորորդի Թէոդորոսին աշակերտելու է ուղարկել Մինեաց Մաթուաղայ եպիսկոպոսի մօտ եւ որ նորա մահից յետոյ քրիստաւոր կաթողիկոսն է յաջորդել. իսկ Կաղանկատուացու պատմութեան մէջ նորա անունն անգամ չկայ։* Դորա փոխարէն Սեբեդոս է, որ ամենից հին տեղեկութիւններն է տալիս կոմիտասի կաթողիկոսութեան մասին եւ որ պահել է նորա միակ տպագրութեամբ լոյս տեսած թուղթը՝ պատասխան երոտաղէմի Մողեստոս երէցի մի գրութեան։

Արարատի ներկայ համարին կից լոյս է տեսնում մի ուրիշ դասնաքանակաւ թուղթ, որ կոմիտաս կաթողիկոսի անունն է կրում՝ իրեւ Տեղինակի եւ որ արտատպուած է կըրկին 5. 58 եւ 100 ծեռագիրներից։ Այս թղթի դասնաքանակաւ արժէքը մեծ չէ, պատմական տեղեկութիւններ էլ նա չէ պարունակում։ քայց այն հանգամանքը, որ Հայոց կաթողիկոսը ներկայանում է այստեղ յարաբերութեան մէջ Պարսկաստանի քրիստոնեաների հետ եւ հաստատում է մի ինչ որ միաբանութիւն, որի մէջ անխառն չէ Պարսից

* Յիշենք ի դէպ, որ այդտեղ գտնուում է Արարատի նախորդ համարում հրատարակուած Վրթանէսի թղթի մի համառօտ օրինակը, տարբեր վերնագրով, Ինչպէս նորա վերնագիրն արդէն՝ Փարիզի տպագրութեան մէջ (եր. 412), ցոյց է տալիս (Պատասխանի թղթոյն Միթիարայ՝ Ամարասայ եպիսկոպոսի ի Հայոց, որ հայ հոյս կատարէր ուրեք բերեալ ի գրեանսն), այդ համառօտ օրինակը, որ մեր հրատարակածի նախաբանն ու վերջաբանը միայն ունի, թէեւ մեծ մասամբ աւելի ուղիղ ընթերցումներով նախնական համարուել է կարող, այլ հաւանականաբար ինքը Պաղանկատուացին հանել է նրա միջից ամբողջ դասնաքանակաւ մասը՝ իւր պաշտպանած Ազուանից եկեղեցու համար անպատուաբեր գտնելով այն, որով սակայն այդ թուղթը անբովանդակ ու աննպատակ է դարձել և իւր իսկական նշանակութիւնը ստանում է միայն մեր հրատարակութեամբ։